01/10.1/5446-09

2009-08-13

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Վիկտոր Դալլաքյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ։

Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծի կազմում դեղապահովման աշխատանքների իրականացումը տարեկան ծրագրով գտնում ենք աննպատակահարմար, քանի որ՝

1) տարեկան ծրագրի շրջանակներում ներառվելիք միջոցառումների իրականացումն արդեն իսկ կանոնակարգված է Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրությամբ, մասնավորապես, Հայսատանի Հանրապետության առողջապահության նախարարությունը դեղերի ձեռքբերումը պետության կողմից կենտրոնացված գնումներով իրականացնում է համաձայն «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, ըստ որի, մրցութային գործընթացը, հաղթող կազմակերպությունների հետ պայմանագրային հարաբերությունների ձևավորումն ամբողջությամբ իրականացվում են «Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ի միջոցով։ Հայաստանի Հանրապետության առողջապահության

նախարարությունը, ըստ անհրաժեշտության, տվյալ ժամանակաշրջանի համար իրեն անհրաժեշտ դեղորայքի անվանացանկը հայտի ձևով ներկայացնում է «Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ, ուստի, դեղերի գնման գործընթացի իրականացման հստակ ժամանակացույց չի կարող սահմանվել.

2) դեղերի անվտանգության, որակյալ և մատչելի դեղերի շրջանառության ապահովման ուղղությամբ միջոցառումների իրականացումը նախատեսված է «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներով: Մասնավորապես, «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի համաձայն դեղերի որակի ապահովման պետական վերահսկողության խնդիրը գրանցված արդյունավետ և անվտանգ որակյալ դեղերը բժշկական պրակտիկայում ներդնելն է: Սույն պահանջի ապահովման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի սեպտեմբերի 20-ի N 1581 որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետություն դեղերի և դեղանյութերի ներմուծման ու արտահանման կարգը, իսկ 2001 թվականի ապրիլի 25-ի N 347 որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետությունում դեղերի պետական գրանցման կարգը, ինչպես նաև սահմանվել են դեղերի պետական գրանցման փորձաքննության վարձի չափերը, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2006 թվականի փետրվարի 7-ի N 123-Ն հրամանի հիման վրա կատարվում է դեղերի պետական գրանցման նպատակով իրականացվող փորձաքննությունը.

3) տարեկան ծրագրի շրջանակներում դեղերի շրջանառության ոլորտում ընդգրկված դեղագործական կադրերի, համապատասխան կադրերի պատրաստման և վերապատրաստման ուղղությամբ նախատեսվող աշխատանքների իրականացումը կարգավորված է Հայաստանի Հանրապետության կառավարության 1994 թվականի հուլիսի 19-ի N 330 որոշմամբ, որով կանոնակարգված է պրովիզորների հետդիպլոմային կրթության անցկացման գործընթացը.

4) բնակչության առանձին սոցիալական խմբերի դեղապահովման միջոցառումների իրականացման աշխատանքները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մասին» N 318-Ն որոշմամբ հաստատված ամենամյա առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման ու ֆինանսավորման կարգի 8-րդ կետով, համաձայն որի բնակչությանն անվճար և արտոնյալ պայմաններով դեղերը տրամադրվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված՝ բնակչության սոցիալական խմբերի ցանկում ընդգրկված և առանձին հիվանդություններով տառապող անձանց: Նույն կետով սահմանված է, որ հիմնական դեղերի ցանկն ու տրամադրման կարգը սահմանում է նախարարը: Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N 1717-Ն որոշմամբ սահմանված է անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր ձեռք բերելու իրավունք ունեցող բնակչության սոցիալական խմբերի ցանկը, ինչպես նաև այն հիվանդությունների ցանկը, որոնց առկայության դեպքում ամբուլատոր-պոլիկլինիկական, դիսպանսերային և հիվանդանոցային բժշկական հաստատությունների միջոցով դեղերը հիվանդներին տրվում են անվճար: Նշված որոշմամբ հաստատված անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր ձեռք բերելու իրավունք ունեցող բնակչության սոցիալական խմբերի և հիվանդությունների ցանկում ընդգրկված հիվանդներին դեղերի հատկացման կարգը կանոնակարգված է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2007 թվականի մայիսի 16-ի N 74–Ն հրամանով, որի 3-րդ կետի համաձայն «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան պետության կողմից կենտրոնացված գնումներով ձեռք բերվող դեղերը հատկացվում են ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպություններին, մասնագիտացված հիվանդանոցներին և դիսպանսերներին՝

համաձայն բաշխացուցակների, որոնք հաստատվում են Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի հրամաններով։ Նշենք նաև, որ նշված իրավական ակտերը մանրամասն կանոնակարգում են դեղերի տրամադրման գործընթացը.

5) մարդասիրական օգնության կարգով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության անվամբ ստացվող դեղերի և բժշկական նշանակության ապրանքների պատվերի ձևավորումը, ստացումը, հաշվառումը և բաշխումը կանոնակարգված են Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հոկտեմբերի 14-ի N 1432-Ն որոշմամբ։

Այսպիսով, յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության տարեկան բյուջետային և միջնաժամկետ ծախսային ծրագրերի հայտերում հաշվարկվում և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն է ներկայացվում կենտրոնացված կարգով ձեռք բերվող դեղերի ցանկը՝ հիվանդների թվաքանակին և հիվանդությունների տեսակներին համապատասխան, և ֆինանսավորման համամասնությունները։

Հայաստանի Հանրապետության կառավարությունն իրականացնում է ծրագրային բյուջետավորման ներդրմանը և պետական ու տարածքային կառավարման մարմիններում աշխատանքային ծրագրերի կատարողականի գնահատման համակարգի ձևավորմանն ուղղված բարեփոխումներ։ Անհրաժեշտ ենք համարում օրենսդրական դաշտը վերափոխել այդ բարեփոխումների ընթացքին և բովանդակությանը համահունչ։

Բացի դրանից՝ հաշվի առնելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝

ա. 39-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, նախագծի 1-ին հոդվածում «նոյեմբերի 26-ի թիվ-259-ՀՕ» բառերն անհրաժեշտ է փոխարինել «հոկտեմբերի 27-ի թիվ ՀՕ–259» բառերով,

բ. 41-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները՝ նախագծի համարակալումն անհրաժեշտ է վերանայել։

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունն աննպատակահարմար է համարում ներկայացված օրենքի նախագծի ընդունումը։

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի տեղակալ Թ. Հակոբյանը։

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ
Պ-655-30.06.2009-ԱՄ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին

Հոդված 1. «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության 1998 թվականի նոյեմբերի 26-ի թիվ-259-ՀՕ օրենքի /այսուհետ՝ օրենք/ 18-րդ հոդվածի վերջը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր մասով՝

«Հայաստանի Հանրապետության բնակչության դեղապահովման աշխատանքներն իրականացվում են տարեկան ծրագրով /այսուհետ՝ տարեկան ծրագիր/, սահմանված ժամկետներում եւ կարգով։ Տարեկան ծրագիրը կառավարությունն Ազգային Ժողով է ներկայացնում պետական բյուջեի նախագծի կազմում։ Տարեկան ծրագիրը ներառում է՝

ա/ ծրագրի հիմնական խնդիրները,

բ/ նախատեսված աշխատանքների ծավալները եւ իրականացման ժամանակացույցը,

գ/ նախատեսված աշխատանքների ֆինանսավորման համամասնությունները,

դ/ ծրագրի կատարման սկզբունքները եւ նախատեսված աշխատանքների իրականացման առաջնահերթությունները,

ե/ բնակչությանը դեղերով ապահովելու աշխատանքների իրականացման եւ դրանց ֆինանսավորման /այդ թվում օտարերկրյա պետություններից եւ միջազգային կազմակերպություններից ստացված օգնությունների հաշվին/ գործընթացի վերահսկողության կարգը,

զ/ անվտանգ, արդյունավետ, որակյալ եւ մատչելի դեղերի շրջանառության ապահովման ուղությամբ նախատեսվող միջոցառումները,

է/ դեղերի շրջանառության ոլորտում ընդգրկված դեղագործական կադրերի, համապատասխան մասնագետների պատրաստման եւ վերապատրաստման ուղղությամբ նախատեսվող աշխատանքները,

ը/ բնակչությանը մատչելի դեղերով ապահովելու ուղղությամբ նախատեսվող միջոցառումները,

թ/ հիմնական դեղերի ֆիզիկական եւ տնտեսական մատչելիության ապահովման ուղղությամբ նախատեսվող աշխատանքները,

ժ/ դեղերի տեղական արտադրության խթանման ուղղությամբ նախատեսվող միջոցառումները,

ժա/ բնակչության առանձին սոցիալական խմբերի դեղապահովման միջոցառումների իրականացման ուղղությամբ նախատեսվող աշխատանքները,

ժբ/ բնակչության սոցիալական խմբերի ու անապահով խավերի, ինչպես նաեւ այն հիվանդությունների ցանկերը, որոնց դեպքում համապատասխան դեղերը հատկացվում են անվճար կամ արտոնյալ պայմաններով,

ժգ/ այլ պայմաններ, որոնք անհրաժեշտ են ծրագրի համակողմանի ներկայացման համար։

Տարեկան ծրագրի հետ կառավարությունն Ազգային Ժողով է ներկայացնում դրա կատարումն ապահովող օրինագծերը։

Տարեկան ծրագրի կատարման մասին հաշվետվությունը հերթական տարվա պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության բաղկացուցիչ մասն է»։

Հոդված *2.* Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԴԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ

Օրինագծի ընդունումը պայմանավորված է բնակչության դեղապահովման պետական նպատակային ծրագրերը տարեկան կտրվածքով ներկայացնելու եւ համապատասխան բյուջետային ֆինանսավորում հատկացնելու անհրաժեշտությամբ։ Այդօրինակ մոտեցում ամրագրված է, մասնավորապես, «ՀՀ հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» օրենքում /Հոդված 41, 42 եւ 43/, «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքում /Հոդված 33, 34 եւ 35/ եւ «Սեւանա լճի մասին» ՀՀ օրենքում /Հոդված 12, 13 եւ 14/։

Օրինագծի մշակմանը մասնակցել են իմ օգնականներ՝ Արմենուհի Սաղաթելյանը եւ Երվանդ Դալլաքյանը։